

Մուտքի դաս

(Մտահղացումը ԿԱԻ –ի մեթոդիստ Ն. Վիրաբյանի, իրագործումը ըստ Մ. Սարգսյանի տարբեր պատմվածքների)

Սայաթ-Նովա

Առավոտ լուսոյ արեգակն արդար, առ ի լոյս ծագեա...

Տաճարի կիսախավարում բուրվառում էր արևոտ երգը: Արևի շողքը շապիկի նման կախվել էր պատուհանից, իսկ հաստակին ընկածը նմանվում էր կորցրած թաշկինակի: Երգում էր ` աչքը աստվածամոր պատկերին: Տաճարի նեղ պատուհանից մի փունջ արև թռել, ընկել էր աստվածամոր նկարին և մերկացրել նրա լուսավոր կուրծքը: Վանականը սարսուռաց: Մոմաբույր մարմնում խայտաց արյունը: Վախեցած վազեց դեպի դուռը ու, չգիտես` ինչու, դռան արանքից նորից նայեց աստվածամորը: Վերջինս ժպտաց ու ցուցադրաբար ծածկեց կուրծքը: արևի փունջը սայթաքեց կրծքից ու ընկավ պատին: Անգոր էր պայքարել սրտի դեմ, որի միակ բնակիչը երազանքն էր, որ վերածվում էր տառապանքի, իսկ տառապանքը` երգի: Ու նրա պատկերը` երազային, չքնաղ, հանգիստ չէր տալիս իրեն: Աստվածամայր էր` իրական, կենդանի, որ չէր հեռանում հայացքի առջևից: Ուզում էր վանել ու ... Աղոթում էր. Տե՛ր Աստված, ինչպիսի՜ հանճարեղ ձեռք ունես դու, և առավել ևս ` ձիրք, և առավելագույս` միտք: Թե որ դու արարել ես այս լուսաբացը մարդու համար, ուրեմն, տու՛ր քո պատկերն ունեցողին գեղեցկությունը ճանաչելու ազատությունը: Թեթևացրու՛ նրա բեռը, որ նա կարողանա նաև հանճարիդ փայլը ճանաչել: Մի՛ մոռանա, որ մարդուն տվել ես գեղեցկագույնը` քո պատկերը: Ուրեմն, աստվածացրու նրան երկրում, զի եթե նա քեզ չաստվածացնի և սերն իր չինկարկի քո առջև, կարժանանա անմահիդ նզովքին: Իսկ դու` երկնայի՛ն տեր, կկորցնես աստվածությունդ ճանաչողին և երկրպագողին: Միրով ստեղծածիդ սիրով պահի՛ր, զի մարդն է քո տեղապահը այս աստվածածին երկրում... Ավարտեց աղոթքը , բայց մտքերը դեռ հեռվում էին` իր հայրենի քաղաքում:

Թիֆլիսն այդ օրը եկել էր Օրթաճալա, բռնել հարևան այգիները` թամաշանելու, երգը հազար բերանով թոցնելու:

Թիֆլիսը ոչ միայն ապրանքով բեռնված քարավանների, այլև փառքի տենչով տարված և արդեն փառավորված երգասանների, աշուղների երգերի ու խաղիկների հանգրվանն էր:

Ինքն էլ` դեռևս աշակերտ, երգ էր տենչում, փառք` երբեք: Բայց փառքը կույր է և իր ոտքով եկավ և գտավ նրան:

Մեջլիսն ավարտվեց: Հաղթանակը կատարյալ էր, և անսահման էր թիֆլիսցիների ուրախությունը: Երեք լեզվով գովում, երեք լեզվով օրհնում էին նրան: Երեք լեզվով աղմկում էր քաղաքը:

-Արևիդ մատաղ, Արութի՛ն...

-Էս էն ջուլհակի աշկերտը չէ՞ր, գենացվալե:

-Հա, բա՞ ս, իրա ուստի իրեսը սիվտակ արավ, մի դազգահ շինեց, հիմիկ էլ ըստի: Հալալ ա քո կերած կաթը, բիճո՛ս:

-Ղուրբա՛ն օլում...

Իսկ երբ հաղթող պատանու առջև Ֆաթուլլան խոնարհեց իր հինայած մորուքը և մեկնեց ոսկով ու քահրիբարով զուգված սազը, ամբողջի խանդավառությունը հասավ գագաթնակետին: Երգչի հայացքը վառվում էր խոնավ բոցով: Իսկ նրա դիմաց հուրհրացող հայացքով գողունի նայում էր նա՝ աստվածամայրը՝ մսից ու արյունից՝ զուգված դշխուհու պաճուճանքով:

-Դուն կրա՛կ, հագածդ կրա՛կ,

Վուր մե կրակին դիմանա՛մ...,-մրմնջում էր երիտասարդի հոգին, ու նա արտասվում էր ուրախությունից:

Պարսից մեծանուն աշուղ Ֆաթուլլան, որը մրցության մեջ ավարել էր արևելքի ամենագրնգուն սազերը, ահա իր հպարտ ճակատը խոնարհել, մորուքով քիչ է մնում ավլի պատանի երգչի չուխայի փեշերը: Ֆաթուլլան, սազը գլխից բարձր բռնած, երկարել է հաղթողին: Երգիչը մեկնեց ձեռքը և վերցրեց սազը:

Ժողովուրդը լռեց.

-Դու մեծ շայիր ես, Ֆաթուլլա, թող բարի լինի քո տունդարձի ճամփան, որովհետև գալստյանդ ճամփան քեզ պարտություն բերեց: Դու ազնիվ մեջլիսում նվաճեցիր իմ վարպետի՝ աշուղ Գյուրջի Հովհանի քամանչան ու տանուլ տվիր քո սազը: Բայց մենք գիտենք մեծերի հարգը, քանզի հերոսին աստիճանագրկելը մեծահոգություն չէ:

Ֆաթուլլան դողացող ձեռքերով վերցրեց սազը, համբուրեց ու կախեց վզից: Հետո դարձավ երգչին.

-Էվալլահ, մե՛ծ վարպե տ, իմաստնությամբ դու առաջ ես ընկել տարիքիցդ: Դու գիտես և՛ երգի գինը, և՛ երգչի պատիվը: Էվալլահ...

Ֆաթուլլային հարգանքով ճանապարհ տվին: Աշուղ Գյուրջի Հովհանը գրկեց իր հոգեզավակին.

-Հիմիկուց դեն դու Մայթ-Նովան իս, Արուֆին, Մայթ-Նովա...

-Մայթ-Նովա..., -մրմնջում էին աստվածամոր շուրթերը, ու այտերի շառափը ավելի էր ցուլացնում աչքերի փայլը:

-Մայթ-Նովա..., -գոչում էր Թիֆլիսը միաբերան:

Երգչի գլխում մշուշ էր ծնված հաղթության արցունքներից, մեծարանքի աղմուկից, որին միախառնվում էին նրա շենշող պատկերը՝ դալամով քաշած:

Հրավիրվեց պալատ: Երգում էր երգը՝ հոգուց բխած: Ո՞ւմ էր ձոնում, չգիտեր: Երազային, եթերային, հողի ու կրակի բույրով ու բոցով՝ մի պատկեր կար կոպերի տակ և նա լսում էր մոտեցող մեծ սիրո մանրիկ ոտնաձայնը:

Սակավաթիվ շքախմբի ուղեկցությամբ թագավորը, թագուհին ու արքայաքույր Աննան վերադառնում էին առավոտյան Ժամերգությունից: Հանդիպեցին հայացքները խաչաձևվեցին: Միայն մեկը նկատեց երիտասարդ երգչի շփոթմունքն ու գունատվելը:

Արքայաքույրը նստած էր սպիտակ նժույգի վրա շիտակ, աստվածավարի և զարմանքով ու հիացմունքով նայում էր երգչին՝ ասես որոնելով օդում ցրվող ու հեռացող երգի հնչյունները: Մերը մեղք չէ, գիտեր, բայց իր սերն ուրիշ էր: Իր սերը մեղավոր էր, բայց հանցա՞նք է գեղեցիկը պաշտելը: Մերն աստվածային է, բայց այդ աստվածայինը բարձր է Աստծուց: Այդ աստվածայինն ուներ մի անուն՝ Աննա՛ ...

Ու արքայական այգու պարիսպները թավուտներն ու թփուտները չկարողացան աշխարհից թաքցնել երգչի մեղավոր սերը :

Արքան չուզեց հավատալ, բայց փաստերը գորավոր էին : Հերակլը գունատվեց եռաց չարությունից: Պատիժն անխուսափելի էր:

Հուշերը բզկտում էին վիրավոր սիրտը: Պատկերները մշուշվում ու պայծառանում էին: Ավարտվում էր Առավոտ լուսուն: Չոքել էր աստվածամոր նկարի առջև ու տեսնում էր Աննային: Իսկ կնոջ՝ Մարմարի կերպարանքը աղոտ էր ու վարագուրված: Բախտավոր էր Մարմարը, խաբված բայց բախտավոր՝ իր անգիտությամբ: Բարի՛, բարի՛ Մարմարը, որ պարզևեց առաջնեկի ճիշը: Ու թեև իր սիրով չկարողացավ գերել ամուսնուն, բայց վարձահատույց եղավ մայրությամբ: Այդ քնքու շ, բարի՛ ու չսիրված Մարմարը:

Շուրթերը մրմնջում էին աղոթք առ Աստված, իսկ աստվածամայրը ժպտում էր Աննայի ժպիտով:

Վերջացել էր առավոտյան Ժամերգությունը: Մի մոլորված աղավնի թևերի թափահարումով հանգցնում էր մոմերի բոցը, որոնց կրքոտ լեզուները ձգվում էին դեպի աստվածամոր կաթնագույն կուրծքը:

Քեզ շատ նման էր Աննան, աստվածամայ՛ր, շատ: Մերս երգով էի բուրվառում նրա առջև : Արեգակներ էի վառում դժգույն մոմերի տեղակ, սուլթան ու խան կոչում նարան, քանզի սերն է ամենամեծ իշխանն ու բռնակալը :

Ստեփանո՛ւ, ջերմեռանդ ես աղոթում: Դա գովելի է և աստվածահաճո:

Վանահայրն էր: Քայլում էր դեպի խորանը՝ սեփական ոտնաձայները քարշ տալով հետևից:

Իսկ դրսում վրնջում էր արևը:

Վերլուծություն--Այս պատմվածքի միջոցով աշակերտը հետաքրքրություն է դրսևորում Մայաթ-Նովայի կյանքի, գործունեության նկատմամբ, ընթերցելուց հետո ուսուցիչը հարցերի միջոցով վերապատմել է տալիս մեծ աշուղ-բանաստեղծի կյանքի առավել կարևոր մանրամասները: Այս ձևով աշակերտը հեռանում է դասագրքային մերկ փաստերից ու թվերից և առավել հետաքրքիր ձևով է մոտենում հեղինակի կենսագրության բացահայտմանը: Հարց ու պատասխանի միջոցով ապահովվում է հետադարձ կապը: Այսքանից հետո նախընտրելի է լսել Մայաթ-Նովայի երգերից առավել տարածված դասական կատարումներ: